ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

06.05.2020

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1,
հեռ. (+374 12) 22 22 22, ֆաքս(+374 10) 59 05 82
էլ. փոստ՝ ashb@ardshinbank.am
կայք՝ www.ardshinbank.am

«Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի 2020 թվականի ապրիլի 30-ի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 2020-1-2 Լ որոշմամբ որոշվել է՝

1. «Արդշինբանկ» ՓԲԸ 2019 թվականի ֆինանսական հաշվետվությունների համաձայն 9,601,157,000 (ինը միլիարդ վեց հարյուր մեկ միլիոն մեկ հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամ գումարի «Արդշինբանկ» ՓԲԸ զուտ շահույթը (հարկերի նվազեցումից և «Արդշինբանկ» ՓԲԸ «Ա» դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց միջանկյալ շահութաբաժինների վճարումից հետո) բաշխել հետևյալ կերպ՝

- 480,057,850 (չորս հարյուր ութսուն միլիոն հիսուն յոթ հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, որը կազմում է 9,601,157,000 (ինը միլիարդ վեց հարյուր մեկ միլիոն մեկ հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամ զուտ շահույթի 5% (հինգ տոկոսը), կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում,
- «Արդշինբանկ» ՓԲԸ Խորհրդի 30.04.2019 թվականի թիվ 06/19-05 Լ, 05.08.2019 թվականի թիվ 08/19-01 Լ և 12.02.2020 թվականի թիվ 01/20-02 Լ որոշումների հիման վրա «Ա» դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց բաշխվել և վճարվել են միջանկյալ 140,861,944.70 ՀՀ դրամի չափով շահութաբաժիններ,
- մնացած գումարն ուղղել «Արդշինբանկ» ՓԲԸ «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

2. «Արդշինբանկ» ՓԲԸ 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով «Արդշինբանկ» ՓԲԸ տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարել: